ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0
010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.31/32986-2022

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՎԱՀԱՆ ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Նարիբեկյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1)««Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և ««Գովազդի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի (Պ-356-19.08.2022-ԳԿ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները

2)Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի հոկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1164-Ա որոշումը

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Ագնեսա Առաքելյան
Ազգային ժողովի հետ կապերի վարչության փորձագետ
Հեռ. 010515403 077787821
Էլ փոստ՝ agnesa.arakelyan@gov.am

«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԳՈՎԱԶԴԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Պ-356-19.08.2022-ԳԿ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և «Գովազդի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի (այսուհետ նաև՝ Փաթեթ) վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

1. «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ հայտնում ենք՝
   1) Օրենքի նախագծով նախատեսվում է «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 43-րդ հոդվածում լրացնել նոր՝ 4-րդ մաս, ըստ որի՝

*«4. Սույն հոդվածի 1–ին մասի 1–ին կետով սահմանված անունը չի կարող **համընկնել կամ շփոթելու աստիճան նման լինել ընկերության ապրանքային նշանի կամ անվան հետ, իրենց գովազդներում օգտագործված գրաֆիկական, ձայնային նշաններին նույնական կամ շփոթելու աստիճան նման նշաններին,** որը վերջին հինգ տարում զբաղվել է շահումով խաղի (ինտերնետ շահումով խաղի) կամ վիճակախաղի կազմակերպչի գործունեությամբ:»*:

Վերոնշյալի կապակցությամբ հայտնում ենք հետևյալը.

1) «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը վերաբերում է Հեռարձակողի կարգավիճակ ստանալու կապակցությամբ կարգավորող պետական մարմին ներկայացվող հեղինակազորման հայտում նշվող տեղեկատվությանը, մասնավորապես՝ ***հայտատուի անվանմանը***, մինչդեռ նշված հայտում ներառվող պարտադիր պահանջներից է նաև ***տեսալսողական ծրագրի անվանումը*** (5-րդ կետ), որի կապակցությամբ նույնաբովանդակ արգելող դրույթ է նախատեսվում նաև փաթեթով ներկայացված՝ «Գովազդի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող «Գովազդի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասում, այն է՝

*«5. Արգելվում է **տեսալսողական ծրագրի անվան** մեջ ներառել այնպիսի բառ(եր), որը նույնական է կամ շփոթելու աստիճանի նման է վերջին հինգ տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում գործող շահումով խաղի (ինտերնետ շահումով խաղի) կամ վիճակախաղի կազմակերպչի **անվանմանը:***

Այսինքն, փաթեթում ներառված նախագծերով ներկայացված կարգավորումներն ըստ էության նախատեսվում են կիրառել և՛ հեռարձակողի անվան, և՛ իր կողմից հեռարձակվող տեսալսողական ծրագրի անվան վրա: Այս կապակցությամբ հայտնում ենք, որ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում լրացման մեջ անհրաժեշտ է անդրադառնալ միայն տեսալսողական ծրագրի անվանմանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրավաբանական կամ ֆիզիկական անձի անվանումը նշվում է միայն հեղինակազորման հայտում, հեղինակազորումից հետո վերջիններս ձեռք են բերում Հեռարձակողի կարգավիճակ և նրանց անվանումը որևէ կերպ չի կարող համարվել գովազդ, հետևաբար գտնում ենք, որ Նախագծով ակնկալվող արդյունքին հասնելու համար նախատեսված արգելքը պետք է վերաբերի տեսալսողական ծրագրի անվանմանը:

Ուստի առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 1. «Տեսալսողական մեդիայի մասին» 2020 թվականի հուլիսի 16-ի ՀՕ-395-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 43-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ և 5-րդ մասերով՝ հետևյալ խմբագրությամբ.

«4. Սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված անվանումը չի կարող համընկնել, նույնական կամ շփոթելու աստիճան նման լինել այն անձի ապրանքային նշանին կամ ֆիրմային անվանմանը, դրա գովազդներում օգտագործված կամ օգտագործվող գրաֆիկական կամ ձայնային նշաններին, որը վերջին հինգ տարում զբաղվել է շահումով խաղի (այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղի) կամ վիճակախաղի (տոտալիզատորի) կազմակերպման գործունեությամբ:

5. Եթե հեղինակազորման հայտը չի համապատասխանում սույն հոդվածով սահմանված պահանջներին, ապա կարգավորող պետական մարմինը վերադարձնում է հայտը այն ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում՝ այն սույն հոդվածի պահանջներին համապատասխանեցնելու համար: Հեղինակազորման հայտը վերադարձվելուց հետո մեկամսյա ժամկետում այն սույն հոդվածի պահանջներին չհամապատասխանեցվելու և կրկին չներկայացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը մերժում է հայտը:»:

Այդ կապակցությամբ՝

ա. «Գովազդի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով «Գովազդի մասին» օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 9-րդ հոդվածի 5-րդ մասն առաջարկում ենք հանել, քանի որ մի կողմից այն կրկնություն կլինի Տեսալսողական մեդիայի մասին օրենքի համապատասխան նորմի հետ, մյուս

կողմից՝ սա ոչ այնքան գովազդ արգելող նորմ է, որքան տեսալսողական ծրագրի անվան պահանջ, որը նախատեսվելու է Տեսալսողական մեդիայի մասին օրենքում,

բ. «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի կարգավորումների ամբողջականությունն ապահովելու համար հարկ կլինի նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով՝

«***Հոդված 2.*** Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր 9-րդ կետ.

«9)Հեռարձակողի տեսալսողական ծրագրի անվանումը չի համապատասխանում սույն օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին:»:

2) նախագծի 2-րդ հոդվածի համաձայն՝

«*Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրը և* ***տարածվում է մինչև ուժի մեջ մտնելը առաջացած իրավահարաբերությունների վրա***:»:

Նախագծի ընդունման պարագայում կստացվի մի իրավիճակ, երբ նախքան օրենքի ուժի մեջ մտնելը հեղինակազորման համար հայտ ներկայացրած (հեղինակազորված) ֆիզիկական կամ իրավաբանական անձը, ում անվանումը համընկել է կամ նման է (վերջին 5 տարում) իր ապրանքային նշանին կամ անվան հետ, որի գովազդն արգելված կամ սահմանափակված է՝ այլևս իրավունք չի ունենա շարունակել իր հեղինակազորման ներքո իրականացվող գործունեությունը կամ դրա համար կենթարկվի պատասխանատվության:

Ուստի առաջարկում ենք 2-րդ հոդվածի փոխարեն նախագծում նախատեսել «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» վերտառությամբ հոդված և այն շարադրել հետևյալ բովանդակությամբ.

Հոդված 3. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկմանը հաջորդող տասներորդ օրը:

2. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը հեղինակազորված Հեռարձակողի տեսալսողական ծրագրի անվանումը պետք է համապատասխանեցվի սույն օրենքով սահմանված պահանջներին սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում: Սույն մասի պահանջները չկատարվելու դեպքում կարգավորող պետական մարմինը հեղինակազորված Հեռարձակողի նկատմամբ Օրենքով սահմանված կարգով կիրառում է Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով սահմանված պատասխանատվության միջոցները:

3. Եթե մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը կարգավորող պետական մարմին է ներկայացվել հեղինակազորման հայտ, որը սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին դեռևս

չի ընդունվել, և որը չի համապատասխանում սույն օրենքով սահմանված պահանջներին, ապա կարգավորող պետական մարմինը վերադարձնում է հայտը այն ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում՝ այն սույն օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

4. Սույն հոդվածի 3-րդ մասի համաձայն հեղինակազորման հայտը վերադարձվելուց հետո մեկամսյա ժամկետում այն սույն օրենքի պահանջներին չհամապատասխանեցվելու և կրկին չներկայացվելու դեպքում, կարգավորող պետական մարմինը մերժում է հայտը:»:

3) Առաջարկությունների ընդունման դեպքում նախագծի վերնագրում «ԼՐԱՑՈՒՄ» բառը պետք է փոխարինել «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառով:

2. «Գովազդի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի՝

1) 1-ին հոդվածով «Գովազդի մասին» օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 9-րդ հոդվածի 8-րդ մասում վերանայման կարիք ունեն «***հեռուստառադիոհաղորդումների ազդին***», «***հեռուստառադիոհաղորդման***» բառերը՝ նկատի ունենալով, որ նշված բառերը չեն կիրառվում «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում: Նշվածի կապակցությամբ առաջարկում ենք նոր խմբագրությամբ շարադրվող 9-րդ հոդվածի 8-րդ մասում «***հեռուստառադիոհաղորդումների***» և «***հեռուստառադիոհաղորդման***» բառերը փոխարինել համապատասխանաբար «***տեսալսողական հաղորդումների***» և «***տեսալսողական հաղորդման***» բառերով՝ համապատասխանեցնելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում գործածվող հասկացություններին:

2) 3-րդ հոդվածի մասերի համարակալումն առաջարկում ենք տեքստից բաժանել միջակետերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասը, այն է՝ *«7. (...) Հոդվածների և մասերի համարները տեքստից բաժանվում են միջակետերով, իսկ հոդվածների կետերի համարները՝ փակագծերով: (...)»*:

3) 3-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված փոփոխությունն ունի վերանայման կարիք՝ նկատի ունենալով, որ «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 10-րդ մասի 1-ին պարբերության մեջ «***հեռուստահաղորդմամբ***» բառ առկա չէ: Միևնույն ժամանակ կարծում ենք նշված փոփոխությունը վերաբերելի է 10-րդ մասի 2-րդ և 3-րդ պարբերություններին, հետևաբար առաջարկում ենք «Գովազդի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 1-ին

մասում «***10-րդ մասի 1-ին պարբերության***» բառերը փոխարինել «***10-րդ մասի***» բառերով:

4) 3-րդ հոդվածի 2-րդ մասում «Արգելվում է» բառերից առաջ անհրաժեշտ է լրացնել «12.» թիվը և կետադրական նշանը:
5) 3-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված փոփոխությունն ունի վերանայման կարիք՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասը, այն է՝

«1.Նորմատիվ իրավական ակտում փոփոխությունները կատարվում են նրա առանձին՝

1) բառեր, թվեր կամ կետադրական նշաններ այլ բառերով, թվերով կամ կետադրական նշաններով փոխարինելու միջոցով.
2) բառեր, թվեր կամ նախադասություններ հանելու միջոցով.
3) բաժիններ, գլուխներ, հոդվածներ, մասեր, կետեր, ենթակետեր, պարբերություններ կամ նախադասություններ նոր խմբագրությամբ շարադրելու միջոցով.
4) բաժինների, գլուխների, հոդվածների, մասերի, կետերի, ենթակետերի կամ պարբերությունների գործողությունը դադարեցնելու միջոցով:»:

6) 4-րդ հոդվածում «Տեսալսողական» բառից առաջ անհրաժեշտ է լրացնել «2.» թիվը և կետադրական նշանը:
7) 5-րդ հոդվածում «հաջորդող» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «տասներորդ» բառը:
8) Առաջարկում ենք նախագծով սահմանել «գովազդային հատուկ հաղորդումներ» հասկացության սահմանումը:

Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ նախագծի 1-ին հոդվածով «Գովազդի մասին» օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 9-րդ հոդվածի 4-րդ մասում կատարվող փոփոխությունը անհավասար պայմաններ է ստեղծում Հանրային հեռարձակողի ծրագրերի միջև: Վերոնշյալով պայմանավորված առաջարկում ենք թույլատրել գովազդը Հանրային հեռարձակողի կրթական-մշակութային ծրագրերում **<u>ժամանցային</u>** տեսալսողական հաղորդումների հեռարձակման *(գ/ֆ, վ/ֆ, հ/ս, համերգ)* ժամանակ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1164 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Ավետ Պողոսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և «Գովազդի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը (Պ-356-19.08.2022-ԳԿ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Երևան 06.10.2022

ՆԱԽԱԳԻԾ

Պ-356-19.08.2022-ԳԿ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեսալսողական մեդիայի մասին» 2020 թվականի հուլիսի 16-ի ՀՕ-395-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 43-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ մասով՝ հետեւյալ խմբագրությամբ.

«4. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված անունը չի կարող համընկնել կամ շփոթելու աստիճան նման լինել ընկերության ապրանքային նշանի կամ անվան հետ, իրենց գովազդներում օգտագործված գրաֆիկական, ձայնային նշաններին նույնական կամ շփոթելու աստիճան նման նշաններին, որը վերջին հինգ տարում զբաղվել է շահումով խաղի (ինտերնետ շահումով խաղի) կամ վիճակախաղի կազմակերպչի գործունեությամբ:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկման հաջորդ օրը եւ տարածվում է մինչեւ ուժի մեջ մտնելը առաջացած իրավահարաբերությունների վրա:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» եւ «Գովազդի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունման

1. Ընթացիկ իրավիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

«Գովազդի մասին» օրենքով սահմանված են գործունեության տեսակներ, որոնց գովազդը արգելված կամ սահմանափակված է: Այդպիսի գործունեության տեսակներից է խաղային բիզնեսը՝ օնլայն եւ ոչ օնլայն կազինոներ, բուքմեյքերներ, վիճակախաղեր, շահումով խաղեր, ինտերնետ շահումով խաղեր եւ այլն: Այսինքն շահումով խաղերի եւ վիճակախաղերի համար օրենսդիրը սահմանել է գովազդային էական սահմանափակումներ՝ նպատակ ունենալով մի կողմից պաշտպանել սպառողների շահերն ու իրավունքները, մյուս կողմից հասարակության շրջանում հնարավորինս չխթանել խաղամոլությունը: Սա ենթադրում է, որ այս մոտեցումը պետք է պահպանվի նաեւ տեսալսողական մեդիա դաշտի խաղացողների՝ բոլոր տեսակի ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի գովազդների համար: Սակայն գործող օրենսդրությունը թույլ է տալիս ունենալ տեսալսողական մեդիա միջոցներ, որոնց անվանումները կարող են նույնական կամ շփոթության աստիճան նման լինել գովազդի մասին օրենքով սահմանափակումների ենթարկված շահումով խաղերի (ինտերնետ շահումով խաղերի) եւ վիճակախաղերի կազմակերպմամբ զբաղվող ընկերությունների անվանումների կամ ապրանքային նշանների հետ: Այսինքն սա հնարավորություն է տալիս ունենալ ռադիո կամ հեռուստաալիքներ, որոնց անվանումները մարդկանց մոտ կարող են ասոցացվել խաղային բիզնեսի հետ՝ ըստ էության դառնալով անուղղակի գովազդ: Հետեւաբար «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում լրացում կատարելու անհրաժեշտությունը գալիս է այն նպատակադրումից, որ բնակչությանը պաշտպանելու համար պետք է փակվեն նաեւ գովազդի հետ կապված սահմանափակումները անուղղակի շրջանցելու բոլոր տեսական հնարավորությունները: Այս համատեքստում, կարծում ենք, պակաս կարեւոր չէ նաեւ ազատ մրցակցային եւ հավասար դաշտի ապահովումը այդ շուկայի բոլոր խաղացողների համար, ինչը օրենքի նախագծի ընդունումով եւս կապահովվի:

Կարեւոր է նաեւ ժամանակային գործոնի հաշվի առնելը (մարդկանց հիշողություն, ապրանքանիշի անվան հետ առաջացող զգացողությունների, տպավորություններ, հիշողություններ), ուստի սույն օրենքով արգելվում է ունենալ տեսալսողական մեդիա

միջոց, որի անվանը կամ ապրանքային նշանի անվանը նույնական կամ շփոթության աստիճան նման անվանումով ընկերություն վերջին հինգ տարում զբաղվել է շահումով խաղերի (ինտերնետ շահումով խաղերի), վիճակախաղերի կազմակերպման գործունեությամբ:

Բացի այդ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքն ուժի մեջ է մտել 2020 թվականի օգոստոսի 7-ին, որով սահմանվել են նոր կարգավորումներ տեսալսողական մեդիա դաշտի համար, ինչպես նաեւ սահմանվել են նոր հասկացություններ, որոնք արտացոլված չեն «Գովազդի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) տեսալսողական մեդիային վերաբերող իրավադրույթներում: Ավելին, ՀՀ Սահմանադրության համաձայն տեսալսողական մեդիա ոլորտը կարգավորող լիազոր մարմինը՝ Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովն է, որը եւս Օրենքում ներկայացված է հին անվամբ, այն է՝ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողով:

Վերը նշվածի համատեքստում՝ պարզ է դառնում, որ Օրենքը՝ տեսալսողական մեդիա ոլորտի կարգավորման մասով, այլեւս ոչ արդիական նորմատիվ իրավական ակտ է, որը պարունակում է այնպիսի դրույթներ, որոնք չեն համապատասխանում առկա համայնապատկերի բնութագրիչներին: Օրենքի այն հոդվածները, որոնք կարգավորում են տեսալսողական մեդիային վերաբերող հարաբերությունները հնացած են եւ համապատասխանում են «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքին, որն ուժը կորցրել է 2020 թվականին:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Առաջարկվում է լրացում կատարել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 43-րդ հոդվածում եւ փոփոխություններ կատարել «Գովազդի մասին» օրենքի այն բոլոր հոդվածներում, որոնք կարգավորում են տեսալսողական մեդիա ոլորտը, մասնավորապես՝ Օրենքի 9-րդ, 14-րդ, 15-րդ եւ 24-րդ հոդվածները:

3. Ակնկալվող արդյունքը

Նշված փոփոխությամբ հնարավոր չի լինի հանրային մուլտիպլեքսում ունենալ տեսալսողական մեդիամիջոցներ, որոնց անվանումները կամ ապրանքային նշանները նույնական կամ շփոթության աստիճան նման կլինեն վերջին հինգ տարում շահումով խաղի (ինտերնետ շահումով խաղի) կամ վիճակախաղի գործունեությամբ զբաղվող ապրանքանիշերի կամ ընկերությունների անվանումների հետ, ինչպես նաեւ կհստակեցվեն այն իրավահարաբերությունները, որոնք կարգավորում են գովազդի հեռարձակումը տեսալսողական մեդիայով, կհամապատասխանեցվեն ինչպես գործող տեսալսողական մեդիա օրենսդրությանը, այնպես արդի միաջազգային կարգավորումներին:

Օրենքի փոփոխությամբ կվերացվեն տեսալսողական մեդիա օրենսդրության հետ հակասությունները եւ կհստակեցվեն Օրենքում օգտագործվող հասկացությունները:

4. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ.

Նախագծով առաջարկվող լրացումը եւ փոփոխությունները բխում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականի ծրագրից: